

մասին մերձակները հրեական, հոռովմեական եւ բիւզանդական օրջաններուն, ինչպէս նաեւ իսլամական Տիրապետութեան ժամանակ գիւղեր կային որոնք կ'ապրէին հողագործութեամբ. բայց նոյն հողամասին վրայ շուրջ անբաւական եր մեակութեան եւ առսնին պէտքերուն համար. անձրեւի շուրջ կը հաւաքուէր շահորներու մէջ եւ ամրան օրերուն մարդեր եւ անասուններ կը սառապէին ծարաւէն. վաղանցիկ գարուն մը միայն ունէին, անմիջապէս արեւի կիզիչ ճառագայթները կը խամրեցնէին նորաբոյս կանաչութիւնը եւ բուսականութիւնը: Ահա այս հողային բարիքներէ եւ շուրէ գրկուած հողամասին վրայ է որ յաճախ կը հաստատուէին անապասականները որոնք շահորներէ կը փորէին եւ կամ հետի տեղերէ կը հայթայթէին շուրջ, արիաբար կը կրէին օրուան ծանրութիւնը եւ սապր: Շատ քիչ տեղեր կային որ շրտ վայրեր ունէին: Յորդանանի դաշտը Գ. դարու վախճանին սկսաւ կրօնաւորական կեանքը Հրեասանի Անապասին մէջ մէկ քանի անապասականներ կ'ապրէին հոն աղբիւրներու մօտիկ քարայրներուն մէջ: Անոնք հալածանքներէ փախչելով եկած բնակած էին Անապասին մէջ եւ հոս հոն Մեռեալ Ծովուն ափանց մօտիկ եղեգներու մէջ կը ծածկուէին:

Յրուսաղէմի անապասական կեանքին հիմնադիրը եղած է Խարիսոն. որուն բնակած տեղը մինչեւ այժմ կը կոչուի *Ուսի Խարիսոն*: Հետեւեալն էր կենցաղը այն անապասականներուն որ կը բնակէին այս հողամասին մէջ. այն այրը կամ հիւղակը՝ որուն մէջ երկար տարիներ կ'առանձնանար անապասական մը՝ կ'ըլլար լուսոյ եւ սրբութեան վառարան մը, երբ Ս. Անտոնի, Իլարիոնի, Եւքիմիոսի եւ Սաբայի նման մեծ վանականներ կ'ստանձնէին նոյն բազմաթիւ հիւղակներու կրօնական դաստիարակութիւնը, եւ արդարեւ այն ասէն հիւղակը կը վերածուէր *Մայր Հիւղակի* երբ աւակներէ կը հաւաքուէին նոյն հիւղակներուն շուրջը: Ահա վանական հաստատութիւններէն առաջ *յուզի* (laure) կեանքը այն անապասականներուն՝ որոնք բազմաթիւ խումբերով ցրուած էին Յրուսաղէմի Անապասին մէջ հաղաքէն մինչեւ Մեռեալ Ծով, ինչպէս յիշեցինք:

Ի՞նչ էին ասոնց կրօնական սովորութիւնները: — Շաբաթ եւ կիրակի օրերը խուցին մէջ կը կատարուէր հասարակաց կրօնական կեանքին սկիզբը: Եկեղեցին՝ ուր կը կատարուէին հսկումները եւ պատարագը, հիմնադարը եղաւ անոր՝ որ յետոյ պիտի կոչուէր